# *Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 3*

ք. Հրազդան 14.03.2018թ. ժամը 11$^{00}$

## ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝*

***Հանձնաժողովի նախագահ՝***

***Ալեքսան Եղիշյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

***Անդամներ՝***

***Համլետ Ստեփանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

***Վարդան Քալանթարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

***Քրիստինե Յավրիյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,

***Հանձնաժողովի քարտուղար՝***

***Համիկ Հակոբյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

## *ՕՐԱԿԱՐԳ՝*

**1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հայտերի գնահատում.**

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.03.2018թ. ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

**2. Գնահատող հանձնաժողովն որոշեց.**

**2.1** <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

**2.2** Կիրառել անգործության ժամկետ.“Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

**2.3** անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

| | | |
|---|---|---|
| ***Հանձնաժողովի նախագահ՝*** | ------------------------ | ***Ա.Եղիշյան*** |
| ***անդամներ՝*** | ------------------------ | ***Հ.Ստեփանյան*** |
| | ------------------------ | ***Վ.Քալանթարյան*** |
| | ------------------------ | ***Ք.Յավրիյան*** |
| ***Քարտուղար՝*** | ------------------------ | ***Հ.Հակոբյան*** |